Վանքից տասը քայլ հարաւ կիսով չափ հողում ծածկուած տապանաքարերի շարքում մինը կրում է հետևեալ գրութիւնը «Այս է տապան Մկրտիչ կուսակրօն սրբազան քահանային. յիշեցէք ի Քրիստոս. թվ. ՉՀԲ. (772)»։

Վանքի տակը կարելի է հաշուել մինչև երեսունևհինգ սենեակների աւերակներ։ Ահա այն բոլորը, ինչ որ կարելի է տեսնել Քարկոփի շրջակայքումը։ Այժմ մօտենանք վանքին։

(Շարունակելի) ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

ԱԶԳԱՅԻՆ

Ամսոյս 25ին Նորին Օծութիւն Վեհափառ Հայրապետն ազգիս առաւօտեան 7 ժամին իւր աղօթքը Հաւրիճոյ վանքի Ս. տաճարում կատարելից յետ, ուղևորվում է դէպի Ս. Աթոռը։ Ներսէս և Արիստակէս Սրբազաններն, որոնք 23ին Ս. Աթոռից գնացել էին Հաւրիճ, ուղեկցում են Նորին Օծութեան։ Նորին Օծութեան ուղեկցում են Հաւրիճից և Արժ. սաղ քահանայ Յովսէփ Կոստանեանց, հայր Մարտիրոս Տէր Պողոսեանց, ինչպէս և այլ բազմաթիւ գիւղական եկեղեցականք ու Հաւրիճոյ ընկերութեան անդամ մեծ. Պ. Յարութիւնեանց, Շիրակայ գաւառապետի օգնականն և այլ պաշտօնատար անանձինք։ Արժ. Հայր Յովսէփ Կոստանեանցն, որ Նորին Օծութեան Հաւրիճում ընդունելու և ճաշկերոյթ պատրաստելու ժամանակ գլխաւոր կարգադրիչ եղած էր, իւր եկեղեցականներով մինչև Բաշ-Ապարան ուղեկցելուց յետ Վեհափառ Հօր օրհնութիւնն առնելով վերադառնում է։

Նորին Օծութիւնը Բաշ-Ապարանում մի քանի ժամ հանգստանալից յետ շարունակում է իւր ճանապարհը մինչև Ղարաքիլիս գիւղն, ուր և գիշերում է։ Ապարանից ուղեկցում է Նորին Օծութեան Էջմիածնայ Գաւառապետ Մեծ. Պ. Դ. Թ. Խան-Ալէքանցն, որ երկու օր առաջ գնացել էր ընդառաջ

Նորին Վեհափառութեան իւր գաւառի սահմանը։ Միւս օր առաւօտեան 8 ժամին Վեհափառ Հայրապետը ճանապարհ է ընկնում և հասնելով Մողնու վանքը, իջնում է կառքից և մտնելով սուրբ տաճարը համբուրում է սեղանն և աղօթում։ Աշտարակի հասարակութեան կողմից թէ եկեղեցականք և թէ բազմաթիւ հեծեալ աշխարհականք հանդիպում են Նորին Օծութեան Իլանչալան գիւղում, ողջունում և խնդրում ընդունելու Նորին Օծութեան համար հասարակութեան կողմից պատրաստած ճաշը Աշտարակում։ Նորին Օծութիւնը բարեհաճում է յարգելու ժողովրդեան ինդիրն ընդունելով նոցա աղ ու հացը։ Աթոռապատկան այգիում ճաշը պատրաստած է լինում, ուր և առանձին վրան է գցած Նորին Օծութեան համար։ Վեհափառ Հայրապետը ցանկանում է այստեղ եւս գիւղը մտնել և եկեղեցին տեսնել, բայց յայտնում են, որ եկեղեցին խափանուած է, ուստի և Նորին Օծութիւնը յորդորում է ժողովրդեան հոգալու իրանց եկեղեցու նորոգութեան համար։ Վեհափառ Հայրապետի համար սեղան պատրաստում են վրանի մէջ, իսկ ուղեկիցների և ժողովրդականաց համար նորա առաջը ծառերի ներքոյ։ Նորին Օծութիւնն անձամբ օրհնում է սեղանը։ Ճաշի ժամանակ բաժակ է առաջարկուում Նորին Օծութեան կենաց, որ բարեմաղթութիւններով դատարկուում է։ Ապա Վեհ. Հայրը առաջարկում է Ս. Էջմիածնայ հաստատութեան համար բաժակ, որի ժամանակ ձեմարանի նախկին սան, Պ. Փարվանեանց կարդում է յարմարաւոր ճառ աշխարհիկ լեզուով։ Սրանից յետո Գաւառապետ մեծ. Պ. Գ. Թ. Խան - Աղեանցն առաջարկում է հայ ազգի բարօրութեան և յաջողութեան բաժակն, որ բարեմաղթութիւններով ընդունուում է և ձեմարանի առաջին լսարանի ուսանող Գասպարեանց, որ պատահմամբ Աշտարակ է եղել այդ միջոցին, կարդում է յարմարաւոր ճառ գրաբար։ Ճաշից յետո մի քանի ժամ հանգստանալից յետոյ, Վեհափառ Հայրապետը օրհնելով ժողովրդեան և շնորհակալութիւն անելով նորա աղ ու հացի համար, ճանապարհ է ընկնում դէպի Ս. Աթոռը։ Էջմիածնայ գաւառակի սահմանում հանդիպում է Նորին Օծութեան գա-

ւառակապետ մեծ. Պ. Բագրատ Հասան Ջալալեանցն իւր ձիաւորներով։ Երեկոյեան վեց ժամին Նորին Օծութեան կառքը կանգնեցաւ Ս. Աթոռիս հիւսիսային դրանը, ուր Աթոռիս միաբանութիւնը շուրջառ գցած, խաչերով ու խաչուառներով և վառած կերոններով ամպհովանու տակ ընդունեց Նորին Օծութեան։ Ճեմարանի երգեցիկ խումբն շարական երգելով առաջնորդեց հանդէսը դէպի Մայր Տաճարն, ուր Նորին Օծութիւնն իւր սովորական աղօթքն անելից յետոյ, ուղեկցութեամբ բոլոր միաբանից և երգեցիկ խմբի նոյն կարգով գնաց Վեհարան։ Թէ Վաղարշապատի հրապարակում և թէ Ս. Տաճարի բակում խուռն բազմութիւն խռնուած էր Նորին Օծութեան հանդիպելու և Նորա օրհնութիւնն առնելու համար։

Ամսոյս 28ին հեռագիրը լուր բերեց, որ Նորին Մեծութիւն Նասրէդդին Շահն Պարսից 29ին ժամանելու է Երևան և 30ին այցելելու է Ս. Աթոռը։ Վեհափառ Հայրապետն իսկոյն Գեր. Ներսէս և Մամբրէ Սրբազան Եպիսկոպոսներին Պ. Պ. Պրօկուրոր Կ. Իւղբաշեանցին և Ռուբէն Մելիք Ադամեանցին ուղարկեց ընդառաջ Երևան, որ շնորհաւորեն Նորին Օծութեան կողմից Նորա շնորհաբեր և յաջող դարձն Եւրոպայից և հրաւիրեն ի Ս. Աթոռս։ 29ին երեկոյեան 7 ժամին Նորին Մեծութիւնը ժամանելով Երևան բարեհաճում է ընդունելու Վեհափառ Հայրապետի պատգամաւորներին։ Ներսէս Սրբազանը հետևեալ խօսքերով ողջունում է Նորին Մեծութեան. «Մեր Վեհափառ Հայրապետը, Հայոց ազգի Ընդհանրական Կաթողիկոսը լսելով և ի սրտէ ուրախանալով Ձերդ Մեծութեան առողջութեամբ և յաջողութեամբ վերադարձն Եւրոպայից՝ շտապեց ուղարկել մեզ օր առաջ շնորհաւորել Ձեր Մեծութեան բարի վերադարձն և ընդ նմին խոնարհաբար խնդրել ի կողմանէ Նորին Օծութեան, որ Ձեր շնորհաբեր այցելութեամբը պատուէք մեր հնադարեան Մայր Աթոռն և Նորին Վեհափառութիւնը»։ Նորին Մեծութիւնը բարեհաճել էր պատասխանելու, «Ասացէք Վեհափառ Կաթողիկոսին. վայը Աստուծոյ շնորհիւ կտես-

նուենք»։ Ցեռոյ Երևանի թեմի առաջնորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսը շնորհաւորում է Նորին Մեծութեան շնորհաբեր գալուստն իւր թեմի գլխաւոր քաղաքը։

—Ամոյս երեսունը նշանաւոր օր էր թէ Ս. Աթոռոյս և թէ Վաղարշապատի համար. ըստորում այդ օրը երկու նշանաւոր տօներ միացան։ Նախ Նորին Մեծութեան Թագաւոր Կայսեր անուանակոչութեան օրն էր. որ սովորաբար հանդիսաւոր կերպով տօնուում է, և երկրորդ Նորին Մեծութիւն Պարսից արեգակնափայլ Նասրէդդին Շահը բարեհաճեցաւ բաղդաւորելու Հայ ազգի հինաւուրց Մայր Աթոռն և Վեհափառ Հայրապետին իւր այցելութեամբ և պատուելու իւր ներկայութեամբ մայրաքաղաքն, որ կատարուեցաւ Ս. Մայր Տաճարում վասն երկար կենաց Թագաւոր Կայսեր։ Կարծես ինքն բնութիւնն էլ նպաստում էր մարդոց ուրախութեան իւր զուարթ և զով եղանակով։

Առաւօտեանից թէ Մայր Աթոռում և թէ Վաղարշապատի փողոցներում մեծ կենդանութիւն էր նկատում։ Մերձակայ գիւղերից անգամ նշանաւոր բազմութիւն ժողովել էր հանդիպելու Պարսից Շահին, ցանկալով յայտնելու իրանց շնորհակալութիւնն, որ Նորին Մեծութիւնը բարեհաճել էր յարգել իւր այցելութեամբ թէ Ս. Մայր Աթոռն և թէ Վեհափառ Հայրապետին ազգիս։ Եկեղեցւոյ զանգակների հնչումն աւետեցին Շահի մերձենալը։ Ճիշդ կէս օրից կէս ժամ առաջ Նորին Մեծութեան կառքը կանգնեցաւ հիւսիսային դրան առաջ։

Այստեղ Աթոռիս միաբանք շուրջառազգեստ, երգիչները շապիկ հագած և ձեմարանի աշակերտք վերարկուներով սպասում էին Բարձր հիւրին։ Նորին Մեծութիւնը իջաւ կառքից և մտաւ ամպհովանու տակ, որ կրում էին չորս աշակերտք ձեմարանի ժամաշապիկ հագած և երկուսն էլ առաջևը խլնկամանները ձեռներին կնդրուկ էին ծխում։ Բարձր Սրբազան Մկրտիչ Արքեպիսկոպոսը առաջարկելով արծաթեայ ափսէի վերայ աղ ու հաց ողջունեց Նորին Մեծութեան գալուստը հետևեալ խօսքերով. «Այս երկրորդ անգամն է որ Ձեր Մեծութիւնը բաղդաւորում է մեր Աթոռը իւր այցելութեամբ.

միաբանութիւնս ուրախ է Ձեր յաջող վերադարձին երկար ճանապարհորդութիւնից և աղօթող է վասն երկար և առողջ կեանց Ձերոց»։ Երևանի քաղաքագլուխ Պ. Գեղամեանցը թարգմանեց թուրքերէն Սրբազանի խօսքերը։

Ճանապարհը մինչև վանքի դուռը ծածկած էր կանաչ ճիւղերով և ծաղիկներով, իսկ վանքի Տրդատայ դռնից մինչև եկեղեցին և այն տեղից մինչև Վեհարան կարմիր մահուդով և ոսկեթել դիբայով։ Միաբանք, երգիչներն և աշակերտք երկշարք առաջնորդեցին Նորին Մեծութեան դէպի եկեղեցին։ Երգիչ խումբը երգում էր այդ հանդիսաւոր օրուան համար մեծ. Պ. Պալեանի շարադրած առանձին երգը ի շնորհաբեր գալուստ Նասրէդդին Շահն Շահին Պարսից։

Վեհափառ Հայրապետը Ս. Տաճարի դրան հանդիպեցաւ Նորին Մեծութեան. Շահը մոտերմաբար սեղմեց Նորին Օծութեան ձեռքը։ Հանդիպումն յոյժ սիրալիր էր։ Վեհափառ Հայրապետը շուրջառ գցած և հովուական գաւազանը ձեռին ողջունեց Նորին Մեծութեան հետևեալ խօսքերով.

«Փառք Ամենազօրին Աստուծոյ, փառք երկնաւոր Թագաւորին Թագաւորաց, որ ի ձեռն հրեշտակի խաղաղութեան առաջնորդեաց Ձերդ Արքայական Մեծութեան ողջամբ վերադառնալ ի կողմանցն Եւրոպիոյ և մեծարել զՄայր Աթոռս Հայաստան աշխարհի Ձերով շնորհաբեր գալստեամբ համաձայն անսուտ խոստման Ձերոյ, որ յԵրևան»։

«Նշանաւոր է օրս այս վասն մեր և մեծ է ուրախութիւնն, որ սփռեալ ծաւալի Ձերով շնորհաբեր գալստեամբ ի հոգիս համայն եկեղեցականաց և աշխարհականաց Հայոց»։

«Ի որիտուր այսպիսի մեծարանաց, զոր ցուցիք մեզ այսօր, զի՞նչ ունիմք փոխարինել, բայց միայն խնդրել յԱմենաբարձրելոյն Աստուծոյ, որպէս զի յաջողեսցէ Ձերդ Արքայական Մեծութեան ողջամբ ժամանել ի մայրաքաղաքն ընդհանուր Պարսկաստանի»։ Նորին Մեծութիւնը պատասխանեց, «հոգեպէս ուրախ եմ, որ յաջողեցաւ Աստուծով կատարելով իմ խոստումս տեսնել Էջմիածինն ու Ձեր Վեհափառութիւնը»։ Առ այս Նորին Օծութիւնը պատասխանեց. «յոյս եմ տածում, այն մեծ

շնորհն, որ այսօր ցոյց տուիք դէպի Ս. Աթոռս և իմ անձն, կայսրութիւն Զերդ Մեծութեան հպատակ Հայերի վերայ ինչ-ոլէս մինչև այժմ։ Պատասխանն եղաւ «Պարսկահայք միշտ Իմ հոգածութեանց և խնամոց առարկայ եղած են և կլինին»։ Թարգմանն էր պ. Վ. Մադաթեանցն, որ շապիկ հագած կանգնած էր Նորին Օծութեան մօտ։

Ապա մոտաւ Շահը Նորին Օծութեան հետ եկեղեցին, ուր իջման սեղանի դասի երկու կողմում դրած էին բազկաթոռներ։ Սկսուեցաւ մաղթանքը։ Շահը յոտընկայս մնաց մինչև մաղթանքի վերջը։ Հանդիսադիրն էր Ս. Աթոռոյս աւագ լուսարար Երեմիա սրբազան եպիսկոպոսը։ Մաղթանքից յետո Նորին Մեծութիւնը բարեհաճեցաւ տեսնելու Ցաճարի թանգարանը, որից յետո դուրս գալով տաճարից մոտաւ ամպհովանուտակ հետն առնելով և Նորին Օծութեան։ Երգեցիկ խումբը նոյն երգով առաջնորդեց Մեծ հիւրին իւր ուղեկիցներով դէպի վեհարանը։ Բոլորեքեան մոտն ընդունարանն, որտեղից Վեհափառ Հայրապետը Նորին Մեծութեան առաջնորդեց ծաղկեայ դահլիճը, ուր Պարսից արքայից արքայն բարեհաճեցաւ կարճատև խօսակցութիւն ունենալու Նորին Օծութեան հետ։ Ձոխ նախաճաշ էր պատրաստած թէ Մեծ հիւրի և թէ նորս ուղեկիցների համար։ Նորին Մեծութեան համար առանձին սեղան էր պատրաստած ծաղկեայ դահլիճում. Վեհափառ Հայրապետի և Շահի բարձրաստիճան ուղեկիցների համար առանձին սենեակումն էր սեղան բացած. Իսկ վեհարանի սեղանատանը մնացելոց համար։ Նոյնպէս երկու տեղ սեղան կար ստորին պաշտօնէից համար։ Նախճաշի ժամանակ Նորին Օծութեան աջ կողմում նստած էր Սատրազամն և ձախ կողմում գեներալ Պոպովը, իսկ ետևը կանգնած էին իբրև թարգմաններ Սինոդի պ. Պրօկուրօրն, Երևանի պ. Քաղաքագլուխն և պ. Ռուբէն Մելիք Ադամեանը գեներալ Պոպովի և Սատրազամի համար։ Նորին Օծութիւնը շարունակ խօսակցում էր թէ մէկի և թէ միւսի հետ։ Վեհափառ Հայրապետը առաջարկեց բաժակներ վասն երկար կենաց նախ թագաւոր Կայսեր և ապա Նորին Մեծութեան Շահին, որոնք դադարկեցան բարձրաձայն կեցցէներով։

Ապա Սատրապամն առաջարկեց բաժակ վասն կենաց Վեհափառ Հայրապետին ամենայն Հայոց. որ դադարկուեցաւ բարեմաղթութիւններով։ Յետոյ խմուեցան բաժակներ Սատրապամի, գէներալ Պոպովի և այլոց համար։ Նախաճաշից յետո Վեհափառ Հայրապետը գնաց ընդունարան, ուր դուրս եկաւ և Նորին Մեծութիւնն, որ սեղմելով Վեհափառ Հայրապետի աջը խորին շնորհակալութիւն յայտնեց հիւրասիրութեան համար և որովհետև որոշեալ ժամը հասած էր, կրկին շնորհակալութիւն անելով տուեց իւր հրաժարականն, ամենքի վերայ ախորժ տպաւորութիւն թողնելով։ Մնացած ուղեկիցները համբուրեցին Նորին Մեծութեան աջը։ Վեհափառ Հայրապետը ուղեկցեց Նորին Մեծութեան մինչև Ցրդատոյ դուռն, ուր վեհափայլ Շահը կրկին շնորհակալութիւն անելով խնդրեց Նորին Մեծութեան վերադառնալ իւր վեհարանն. և հանգիստ առնել։ Ժամը մէկ և կիսին Նորին Մեծութիւնը նստաւ կառքն և վերադարձաւ իւր բոլոր ուղեկիցներով Երևան։ Հանդիսի բոլոր ժամանակ թէ գիւղի հրապարակը թէ Ս. Աթոռոյս ու Վեհարանի բակերն և թէ շրջակայ տների տանիքները լիք էին բազմութեամբ։

Նորին Մեծութեան ուղեկցում էին՝ Մեծ վեզիրը՝ Սադրազամը, Պետերբուրգի Պարսից դեսպան Մահմուտ խանը, գլխաւոր արարողապետ միրզա Ռզան և այլ 17 բարձր աստիճան անձինք, իսկ Ռուս պաշտօնատարներից էին թագաւոր Կայսեր ներկայացուցիչ գէներալ ատիւտանտ Պոպովը, գէներալ լէյտենանտ Բէկլեմիշեվ, ֆլիգէլ ադիւտանտ Պաշկով և Երևանի Նահանգապետ գէներալ լէյտենանտ Շալիկովը։